

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թ.
հունիսի 10-ի նիստի N 22
արձանագրային որոշման

**ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՈՒՐՎԱԳԻԾ**

ԵՐԵՎԱՆ 2011թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍ

ՆԱԽԱԲԱՆ

1. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
2. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՎԻՃԱԿԸ
 - 2.1 Սևանի տարածաշրջան
 - 2.2 Գավառի տարածաշրջան
 - 2.3 Մարտունու տարածաշրջան
 - 2.4 Վարդենիսի տարածաշրջան
 - 2.5 Ճամբարակի տարածաշրջան
3. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՈՒՐՎԱԳԻԾ
 - 3.1 Ճամբարակի տարածաշրջանի աղբավայր
 - 3.2 Վարդենիսի տարածաշրջանի աղբավայր
 - 3.3 Մարտունու տարածաշրջանի աղբավայր
 - 3.4 Գավառի տարածաշրջանի աղբավայր
 - 3.5 Սևանի տարածաշրջանի աղբավայր
4. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԽՈՇՈՐԱՑՎԱԾ) ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

1. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ:200000
2. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ Մ:200000
3. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՈՒՐՎԱԳԻԾ Մ:200000
4. ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ Մ:200000
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՈՒՐՎԱԳԾԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԸ
 5. ՉԿԱԼՈՎԿԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
 6. ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
 7. ԼՃԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
 8. ՎԱՐՍԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
 9. ԶՈՎԱԲԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
 10. ԱՐՏԱՆԻՇԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

11. ՃԱՄԲԱՐԱԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
12. ԳԱՆՁԱԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
13. ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
14. ՆՈՐԱՏՈՒՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
15. ՍԱՐՈՒԽԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
16. ԾԱԿՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
17. ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
18. ԾՈԿԻՆԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
19. ԵՐԱՆՈՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
20. ԳԵՂԱՀՈՎԻՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
21. ԼԻՃՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
22. ՎԱՂԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
23. ՎԱՐԴԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
24. ՎԱՐԴԵՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
25. ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
26. ԶՈԼԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
27. ԿԱՐՃԱՂՔՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԱՂԲԱՎԱՅՐԵՐ (ՎԵՐԱԲԵՌՆՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ)

28. ՇՈՐԺԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ Մ 1:25000
29. ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ Մ 1:25000
30. ՄԱՐՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ Մ 1:25000
31. ԾՈՎԱԶԱՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ Մ 1:25000
32. ԳԵՂԱՄԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ Մ 1:25000

Տեքստային մաս

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՈՒՐՎԱԳԻԾ

ՆԱԽԱԲԱՆ

«Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման գլխավոր ուրվագծի» մշակման աշխատանքը իրականացվել է ՀՀ կառավարության 2010թ. հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի 2009թ. աշխատանքային ծրագրին համապատասխան և ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի

հիմնահարցերի հանձնաժողովի գրություններով ներկայացված միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 876-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 15-րդ կետով նախատեսված միջոցառումները կատարելու նպատակով:

1. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքի նպատակին՝ Սևանի ավազանի աղբավայրերի տեղաբաշխման հնարավոր տարբերակների մշակմանը ներկայացվող պահանջները իրենց մեջ ներառել են նաև տարածքի քաղաքաշինական-տնտեսական կազմակերպման, բնական և մշակութային լանդշաֆտների պահպանության, արդյունավետ կառավարման, ռեկրեացիոն հարուստ ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, ջրային ռեսուրսների մաքրության պահպանման, տարածքների էկոլոգիական հավասարակշռության պահպանման խնդիրները: Այդ նպատակով աղբավայրերի տեղաբաշխման խնդիրները (գոյություն ունեցող վիճակ, վերլուծություն, համալիր գնահատական, հեռանկարային ուրվագիծ) մշակվել են «Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման» նախագծով մշակված համապատասխան գծագրերի վրա՝ լրացնելով և լրամշակելով աղբավայրերի տեղադրման համար տարածքներին ներկայացվող պահանջները:

Հաշվի առնելով Սևանա լճի ջրհավաք ավազանի և Գեղարքունիքի մարզի վարչատարածքային բաժանման առանձնահատկությունները (Կրասնասելսկի և Սևանի տարածաշրջանների որոշ հատվածներ դուրս են մնում ջրհավաք ավազանից), տնտեսական կապերի ընդհանրությունը, կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը, ուրվագծում ուսումնասիրվել է ամբողջ Գեղարքունիքի մարզի տարածքը:

Հայաստանի Հանրապետության ջրային հաշվեկշռում, ինչպես նաև գյուղատնտեսության, էներգետիկայի, արդյունաբերության և տնտեսական այլ ճյուղերի զարգացման գործում, հատկապես բնական կամ տեխնոգեն արտակարգ իրավիճակներում Սևանա լճի դերը անհամեմատ մեծ է: Սևանա լիճը Հայաստանի և հարևան պետությունների խմելու ջրի ռազմավարական պաշարն է:

Հայաստանի տնտեսության, հատկապես էներգետիկայի, զարգացման նպատակներով Սևանա լճի ջրային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման արդյունքում լճային համակարգում տեղի ունեցած ձևաչափական, հիդրոֆիզիկական, հիդրոքիմիական և հիդրոկենսաբանական խորը փոփոխությունների հետևանքով Սևանա լճի մակարդակի 20.2 մետրով իջեցումը բերել է Սևանա լճի էվտրոֆացմանը:

Էվտրոֆացման պրոցեսների դանդաղեցման, վերացման համար ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշմամբ Սևանա լճի հեռանկարային նիշը ընդունվել է 1903.5մ, ալիքի ազդեցության գոտով՝ 1905.0 մետրը:

Լճի բարձրացումը մինչև 1903.5մ նիշը կստեղծի 2մ և ավելի խորությամբ հատակային ջրաշերտ՝ 40C կայուն ջերմաստիճանով, 2011թ. հունվար ամսվա նիշի նկատմամբ բարձրանալով 3.5մ-ով նպաստելով էվորոֆագման գործնթացների աստիճանական վերացմանը:

Սակայն Սևանա լճի էկոլոգիական ներկա իրավիճակը պայմանավորված է ոչ միայն լճային պրոցեսների բացասական վերակառուցմամբ՝ կապված լճի մակարդակի իջեցման հետ, այլ նաև լճի ջրհավաք ավազանում արդյունաբերության, գյուղատնտեսության և տնտեսության այլ ճյուղերի էկոլոգիապես չհիմնավորված գործունեության հետ, ինչի արդյունքում անհամեմատ մեծացել են լիճ թափվող կենսածին տարրեր (ազոտ, ֆոսֆոր և այլն) աղտոտող և տոքսիկ նյութերի քանակները և լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել Սևանա լիճ թափվող գետերում: Անթույլատրելի մեծությունների է հասել գետերի ջրերի մեխանիկական, քիմիական, կենսաբանական աղտոտման ծավալները:

Էկոլոգիական իրավիճակի սրությունը հիմնականում պայմանավորված է լճի ջրհավաք ավազանի ուրբանիզացված միջավայրի (մարզում գոյություն ունի 92 համայնք, որից 87-ը՝ գյուղական 161.9հազ. բնակչությամբ, 5 քաղաքային՝ 79.7հազ. բնակչությամբ, ընդհանուր բնակչությունը 241.6հազ.մարդ 01.01.2010թ. դրությամբ, ամառային սեզոնում հանգստացողների մեծ թվաքանակով) և բնական համալիրի տարրերի (օդային, ջրային, հողային ավազաններ) փոխկապակցվածության բազմազանությամբ և բարդությամբ:

Համաձայն «Սևանա լճի ավազանի տարածքային հատակագծման նախագծի» հիմնադրույթների, Գեղարքունիքի մարզը ըստ քաղաքաշինական-տնտեսական յուրացվածության աստիճանի բաժանվում է հետևյալ գոտիների (գծագիր N 2):

- Ինտենսիվ յուրացված,
- Թույլ յուրացված,
- Ռեկրեացիոն և բնապահպանական,
- Տարաբնակեցման համար անբարենպաստ:

Գոտիների սահմաններն անցնում են բնական և հատակագծային սահմանափակումներով գետերով, ոռոգման խոշոր ջրանցքներով, անտառների եզրերով, մայրուղային ավտոճանապարհներով, երկաթգծով:

Քաղաքաշինորեն-տնտեսապես ինտենսիվ յուրացված գոտին ընդգրկում է Սևանա լճի ափամերձ շերտերին հարող տարածքը, զբաղեցնում է տարաբնակեցման համար պիտանի տարածքի 8.4% (341.3ք.կմ), որտեղ կենտրոնացված է բնակչության մոտ 74.4%-ը:

Գոտում են տեղակայված արժեքավոր գյուղատնտեսական հողերը, ռեկրեացիոն ռեսուրսները (հանքային ջրերը, բուժիչ տորֆերը), բնակավայրերի 40.4%-ը: Ընդ որում ինտենսիվ յուրացված գոտին մեծ տեսակարար կշիռ ունի Գավառի և Մարտունու տարածաշրջաններում,

փոքր տոկոս է կազմում Սևանի, Վարդենիսի տարածաշրջաններում, բացակայում է Ճամբարակի տարածաշրջանում:

- Ինտենսիվ յուրացված գոտու բնակչության էկոլոգիական շեմային չափանիշները գերազանցող մեծ խտությունը (650 մարդ/քառ.կմ) ինժեներական ենթակառուցվածքներով ցածր ապահովվածությունը (չի գործում ջրահեռացման համակարգը, անբավարար է աղբահավաքման և վնասազերծման գործընթացները) ստեղծել են էկոլոգիական կոնֆլիկտային իրավիճակներ (Սևանա լճի աղտոտում):

- Թույլ յուրացված գոտին ընդգրկում է հիմնականում Սևանա լիճը երիզող Գեղամա, Վարդենիսի, Սևանա լեռնաշղթաների ցածր լեռնալանջերը մինչև 2100-2250մ բացարձակ բարձրությունը, ընդ որում գետահովիտներով մինչև 2200-2250մ բացարձակ բարձրություններն են ձգվել Մարտունու և Վարդենիսի տարածաշրջանների բնակավայրերը՝ բնակեցման համար օգտագործելով Վարդենիսի լեռնաշղթայի սարահարթի փոքր թեքություն (մինչև 8-10%) ունեցող լանջերը: Թույլ են յուրացված նաև Սևանի տարածաշրջանի քարքարոտ տեղամասերը (հարավ-արևմտյան մասը), Սևանի արևելյան ափը և ամբողջ Ճամբարակի տարածաշրջանը: Թույլ յուրացված գոտիներն (զբաղեցնում են 1234ք.կմ տարածք՝ մարզի տարածքի 29.0%-ը) օժտված են էկոլոգիական պոտենցիալով և կարող են օգտագործվել բնակեցման և ռեկրեացիոն նպատակներով: Այդ գոտիներում բնակչության խտությունը չի գերազանցում 40-60մարդ/կմ² վրա, գյուղատնտեսական հողերը հիմնականում արոտներն են, վարելահողերը կտրտված են ներկայացված փոքր հողակտորներով:

- Ռեկրեացիոն և բնապահպանական գոտին, որն ընդգրկում է անտառտնտեսության հողերը, «Սևան» Ազգային պարկը, մյուս հատուկ հատուկ պահպանվող տարածքները, ռեկրեացիոն տարածքները, գրավում է 585ք.կմ տարածք (մարզի տարածքի 14.3%-ը):

Այսպիսով, տարաբնակեցման համար բարենպաստ գոտին (ինտենսիվ և թույլ յուրացված) կազմում է մարզի տարածքի (4088 ք.կմ առանց Սևանա լճի) 37%, որտեղ կենտրոնացված են մարզի բոլոր համայնքները (92 համայնք, որից քաղաքային՝ 5 բնակավայր և գյուղական՝ 87 բնակավայր 241.6 հազար բնակչությամբ, այդ թվում քաղաքայինը՝ 79.7 հազար): Այս գոտում են տեղակայված նաև բոլոր արդյունաբերական, ագրոարտադրական և այլ օբյեկտները, առողջարանները, հանգստյան տները, լճի ափամերձ (էկոտոնային) գոտում, առանց հաշվի առնելու էկոլոգիական և քաղաքաշինական նորմերը, կառուցված են և կառուցվում են բազմաթիվ և բազմատեսակ շինություններ,

պարիսպներ և այլն, որոնք ստեղծում են լճի տարատեսակ աղտոտման նորանոր աղբյուրներ:

Մարզի տարածքի էկոլոգիական իրավիճակը ավելի է բարդացնում աղբավայրերի անհամապատասխանությունը սանիտարական նորմերին և կանոններին (ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ. N 25-Ն հրամանով հաստատված «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմեր), ինչպես նաև քաղաքաշինական նորմերին (ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009թ. դեկտեմբերի 29-ի N 321-Ա հրամանով հաստատված «Աղբավայրերի նախագծում և շահագործում» ձեռնարկ):

Մարզի ռելիեֆային բարդ պայմանները սահմանափակումներ են առաջացնում տրանսպորտային մատչելիության տեսանկյունից (բնակավայրերի անհավասարաչափ հեռավորությունը մարզկենտրոնից, քաղաքային բնակավայրերի միջև եղած հեռավորությունը, գյուղական բնակավայրերի հեռավորությունը քաղաքներից) ստեղծելով անբարենպաստ պայմաններ աղբատեղափոխման համար:

Ստորև բերված աղյուսակում տրված է քաղաքային համայնքների հեռավորությունը մարզկենտրոն Գավառից և քաղաքների միջև եղած հեռավորությունները:

	Քաղաքային համայնքները	հեռավորությունը մարզկենտրոնից(կմ)	հեռավորությունը քաղաքների մեջ(կմ)
I	1.Սևան-Գավառ	37.0	
	2.Ճամբարակ-Գավառ	99.0	
	3. Մարտունի-Գավառ	31.0	
	4. Վարդենիս-Գավառ	69.0	
II	1.Ճամբարակ-Վարդենիս		80.0
	Ճամբարակ-Սևան		62.0
	Ճամբարակ-Մարտունի		118.0

	2.Մարտունի-Վարդենիս	38.0
	Մարտունի-Սևան	68.0
	Մարտունի-Ճամբարակ	118.0
	3.Սևան-Մարտունի	68.0
	Սևան-Ճամբարակ	62.0
	Սևան-Վարդենիս	106.0
	4.Գավառ-Սևան	37.0
	Գավառ-Վարդենիս	69.0
	Գավառ-Մարտունի	31.0
	Գավառ-Ճամբարակ	99.0
	5.Վարդենիս-Սևան	106.0
	Վարդենիս-Ճամբարակ	80.0
	Վարդենիս-Մարտունի	38.0
	Վարդենիս-Գավառ	69.0

Աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզկենտրոնից անբարենպաստ հեռավորության վրա են գտնվում Ճամբարակ և Վարդենիս քաղաքները (1.5 ժամից ավել տրանսպորտային մատչելիություն):

Ճամբարակ քաղաքը տրանսպորտային անբարենպաստ մատչելիության գոտում է գտնվում նաև Վարդենիս և Մարտունի քաղաքների հետ, որտեղ գոյություն ունեն աղբավայրեր և սահմանափակ բարենպաստ՝ Սևան քաղաքի հետ (չունի աղբավայր):

Սևան քաղաքը նույնպես տրանսպորտային մատչելիության անբարենպաստ գոտում է գտնվում Վարդենիս և Մարտունի քաղաքների հետ:

Այսպիսով, քաղաքների միջև անբարենպաստ և սահմանափակ բարենպաստ մատչելիությունը դժվարացնում է աղբատեղափոխման օպտիմալ տրանսպորտային մատչելիության պահպանումը:

Աղբավայրերի տեղադրման համար քաղաքաշինական սահմանափակումներ են առաջացնում նաև էկոլոգիական հիմնականախթի տարրերը:

Սևանա լճի էկոլոգիական հիմնականախթը բաղկացած է.

- Հատուկ պահպանվող տարածքներից (արգելավայրեր, արգելոցներ, ազգային պարկեր),
- անտառներից,
- ռեկրեացիոն տարածքներից,
- տարբեր ենթակառուցվածքների սանիտարապաշտպանիչ գոտիներից (տրված է «Տարածքի համալիր գնահատականը» N 2 գծագրի վրա):

Էկոլոգիական հիմնականախթի վերը նշված տարրերը հանդես են գալիս որպես անհրաժեշտ հատակագծային սահմանափակումներ՝ տնտեսական գործունեության տարբեր ոլորտների (այդ թվում աղբահանության) գործունեության ընթացքում:

Պետք է նշել, որ Սևանա լիճը թափվող գետերից Գավառագետի, Ծակքարի, Լիճքի, Արգիչիի, Մարտունու, Վարդենիսի, Մակենիս-Կարճաղբյուրի, Մասրիկի, Բաբաջանի գետաբերանները տարբեր երկարությամբ արգելավայրեր են: Բացի դրանից յուրաքանչյուր գետի երկու կողմից 20մ տարածությունը համարվում է ջրապաշտպան գոտի, որտեղ նույնպես արգելվում է տնտեսական գործունեությունը:

Սևանա լճի էկոհամակարգի փոփոխությունները, բացի ջրային պաշարների 42.2% փոքրացումից, սերտ կապված են նաև ջրհավաք ավազանում բնական (գետային ցանց, գետերի հեղեղաբերություն, աղտոտվածություն, էրոզիոն պրոցեսներ, մթնոլորտային տեղումներ և այլն), ինչպես նաև անտրոպոգեն (տնտեսական գործունեության) պրոցեսների հետ:

Գետային ցանցով խիստ կտրտված է Սևանի արևելյան ափը: Արեգունու և Սևանա լեռնաշղթաներից հոսող գետերը հեղեղաբեր են, մեծ է հեղեղների հաճախականությունը (երեք տարին մեկ), շատ նեղ է ափամերձ շերտը՝ ծանրաբեռնված մայրուղով, երկաթգծով, բարձր ճնշման գազատարով՝ ստեղծելով տարածքային դեֆիցիտ և դժվարացնելով աղբավայրերի տեղադրումը:

Սևանի հարավային ափերի գետերը, ինչպես նշվել է վերևում, արգելավայրային նշանակություն ունեն: Արգելավայրերի, խոշոր բնակավայրերի առկայությունը, բնակչության մեծ խտությունը, բացարձակ բարձրությունների (բարձր 2200մ-ից) նույնպես ստեղծել են տարածքային դեֆիցիտ՝ աղբավայրերի տեղադրման առումով:

Տարածքային որոշակի ռեսուրսներ աղբավայրերի տեղադրման համար առկա են նախալեռնային սարահարթերում՝ 2000մ-2250մ բարձրությունների վրա (Գավառի տարածաշրջանի հարավ-արևմտյան մաս):

Գոյություն ունեցող աղբավայրերի տեղադրման ժամանակ հաշվի չեն առնվել բազմաթիվ քաղաքաշինական սահմանափակումները (մակերևութային ջրերի հոսք, հեղեղաբեր գետակներ, ձվադրման վայրերը արգելոցային հատվածներ գետերի ներքին հոսանքներում, գրունտային ջրերի բարձր մակարդակ, գոյություն ունեցող արգելոցներ և արգելավայրեր, կոյուղու մաքրման կայանների բացակայության, լողափի, առողջարանների, հանգստյան տների առկայություն և այլն): Հաշվի չեն առնված ուժեղ քամիների առկայությունը, որոնք

աղբը տարածում են՝ գրավելով ավելի մեծ տարածքներ: Ոչ մի աղբավայր ցանկապատված չէ: Ընտրված տարածքների չափերը նույնպես չեն համապատասխանում նորմերին: Երևան-Սևան-Մարտունի-Վարդենիս մայրուղու երկարությամբ կան տարերայնորեն ձևավորված աղբավայրեր:

2. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՎԻՃԱԿԸ

Մարզի 92 համայնքներից միայն 27 համայնք ունի աղբավայր, որոնցից 5-ը գտնվում է Սևանի, 5-ը Գավառի, 12-ը Մարտունու, 2-ը՝ Վարդենիսի, 3-ը՝ Ճամբարակի տարածաշրջանում (տրված են համայնքների սխեմատիկ քարտեզների վրա և 1:200000 մասշտաբի N 1 գծագրի վրա):

Ստորև տրված է գոյություն ունեցող աղբավայրի մասին տեղեկություններ:

2.1 Սևանի տարածաշրջան

1) Չկալովկայի գյուղական համայնքի աղբավայրը սպասարկում է նաև Սևան քաղաքին և Լճաշենի գյուղական համայնքին:

Աղբավայրը գտնվում է Չկալովկայի գյուղից դեպի հարավ-արևելք, Երևան-Սևան մայրուղուց աջ ընկած տարածքում: Զբաղեցնում է 2.5հա, գործում է 2006թ-ից («Կառավարության որոշում 30.11.2006թ. N 1773-Ն»): Տարածքը քիչ թեքություն ունեցող սարահարթ է՝ ծածկված ժայռային ապարներով (քարացրոններով կամ չինգիլներով), կտրտված փոսորակներով, բացարձակ բարձրությունները տատանվում են 2100-2250մ: Աղբավայրը չի համապատասխանում գործող սանիտարական նորմերին՝ ցանկապատված չէ, աղբը չի հողածածկվում և տոփանվում, քամին աղբը տանում է տասնյակ կիլոմետրեր:



1985թ. մինչև 2006թ. գործող 8.0հա տարածքով աղբավայրը, կոնսերվացվել է, բայց աղբը տարածվել է 20կմ-ի վրա:



Գործող աղբավայրի աղբը նույապես տարածվում է տասնյակ կիլոմետրեր: Բացարձակ բարձրությունները և ձմեռային ուժեղ քամիները դժվարացնում են աղբավայրի շահագործումը: Ժայռային ապարների առկայությունը բարդեցնում են փոսորակների ստեղծումը: Տարածքը տեսանելի է ճանապարհից: Ըստ «Սևանա լճի տարածքային հատակագծման նախագծի» հիմնադրույթների՝ տարածքը նախատեսված է ռեկրեացիայի հեռանկարային զարգացման համար:



Աղբավայրի հետագա պահպանումը անհեռանկարային է:

2) Լճաշենի գյուղական համայնքի աղբավայրը նախատեսված է գյուղից 600-700մ հարավ-արևմուտք ընկած տարածքում: Աղբավայրի տարածքը 2.0հա է, նախատեսված է ՀՀ կառավարության 13.06.2002թ. N 813-Ն որոշումով: Աղբավայրը չի օգտագործվում, աղբը տեղափոխվում է Չկալովկայի աղբավայր: Աղբավայրը ենթակա է լիկվիդացման, գտնվում է Երևան-Մարտունի-Վարդենիս-Արցախ միջպետական նշանակության ավտոմայրուղու ազդեցության գոտում:



3) Ծովագյուղի գյուղական համայնքի աղբավայրը գտնվում է Սեմյոնովկա տանող ավտոմայրուղու ձախ կողմում: Նախատեսված է 2006թ. ավագանու որոշումով: Բնական փոսորակ է, ջրհավաք ավագանը շատ փոքր է, ջրահեռացման առու նախատեսելուց հետո մակերևույթային հոսքը չի հոսի դեպի փոսորակ: Աղբավայրը դեռ չի գործում, կարելի է գործարկել՝ համապատասխանեցնելով գործող սանիտարական նորմերին:



4) Վարսերի գյուղական համայնքի աղբավայրի համար ՀՀ կառավարության 13.06.2002թ. N 826-Ն հատկացված է աղբավայր՝ 2.0հա տարածքով: Աղբավայրը չի գործում, որովհետև հատկացված տարածքում էներգետիկայի, տրանսպորտի համար առանձնացված տարածքների առկայությունը խանգարում է աղբավայրի տեղադրմանը: Երևան-Սևան ավտոմայրուղուց Վարսեր տանող ճանապարհին կա տարերայնորեն ձևավորված աղբավայր: Համայնքի աղբը համապատասխան պայմանագրով տեղափոխվում է Չկալովկայի աղբավայր:



5) Զովաբերի գյուղական համայնքի աղբավայրը տեղադրված է գյուղից հարավ-արևելք, զբաղեցնում է 0.5հա տարածք, հատկացված է ՀՀ կառավարության 20.02.2003թ. N 172-Ն որոշմամբ, աղբավայրը չի գործում: Հետագա շահագործումը նպատակահարմար չէ:

2.2 Գավառի տարածաշրջան

1) Նորատուսի գյուղական համայնքի աղբավայրը տեղադրված է Երևան-Գավառ ավտոմայրուղու աջ մասում, զբաղեցնում է 5.0հա տարածք, հատկացված է ՀՀ կառավարության որոշումով: Աղբավայրը սպասարկում է նաև Գավառ քաղաքին, գործում է 2004 թվականից:

Տարածքը քիչ թեքություն ունեցող սարահարթ է, բացարձակ բարձրությունները տատանվում են 2100-2250մ: Աղբավայրը չի համապատասխանում գործող նորմերին՝ ցանկապատված չէ, աղբը չի տոփանվում, քամին աղբը ցրում է տասնյակ կիլոմետրեր: Սանիտարական նորմերին համապատասխանող փոսորակի ստեղծումը ժայռային ապարների մեջ, ինչպես նաև բարձր բացարձակ բարձրությունները ձմեռային սեզոնում ստեղծում են բարդություններ՝ աշխատանքների համապատասխան թանկացումով:



2) Սարուխանի գյուղական համայնքի աղբավայրը 2հա տարածքով նախատեսված է ՀՀ կառավարության 01.11.2001թ. N 1054-Ն որոշումով: Աղբավայրը մոտ է գտնվում գյուղատնտեսական հողերին և բնակավայրի կառուցապատված մասին, ձմռանը առաջանում են բարդություններ: Աղբավայրը 2002 թվականից չի գործում: Սարուխանի գյուղական համայնքի ավագանու որոշմամբ Կարմիրգյուղի տարածքում ընտրված աղբավայրից օգտվում են Սարուխանի և Կարմիրգյուղի համայնքները:

3) Կարմիրգյուղի գյուղական համայնքի աղբավայրը ստեղծվել է Կարմիրգյուղի և Սարուխանի գյուղական համայնքների ավագանիների որոշումով: Աղբավայրը գտնվում է Կարմիրգյուղի հարավ-արևելյան մասում, 4-5մ խորություն ունեցող փոսորակի մեջ (օգտագործված հանք): Փոսորակը շրջապատված է գյուղատնտեսության մեջ անօգտագործելի հողերով: Տեղանքը հարմար է աղբավայրի վեռակառուցման համար:



Համայնքի ծայրամասում, հարավ-արևելյան մասում անօգտագործելի հողերի մեջ կա երկրորդ փոսորակը, որը նույնպես կարելի է օգտագործել որպես աղբավայր՝ համապատասխանեցնելով գործող սանիտարական նորմերին:

4) Գանձակի գյուղական համայնքի ՀՀ կառավարության 01.11.2001թ. N 1054-Ն որոշումով առանձնացված աղբավայրը չի գործում, հեռավորության պատճառով ձմեռային ամիսներին շահագործումը անհնար է: Համայնքի ավագանու որոշմամբ աղբավայրը տեղադրվել է գյուղից 5-6կմ հարավ-արևմուտք, բնական փոսորակի մեջ, զբաղեցնում է 1.5հա տարածք:



5) Ծովագարդի գյուղական համայնքի աղբավայրը ավագանու որոշմամբ տեղադրված է Ծովագարդ գյուղից հարավ-արևմուտք գտնվող բլրակի վրա՝ շահագործված հանքի փոսորակում: Փոսորակը շոջապատված է բնական բազալտե պատերով, ճանապարհից փոսորակը չի երևում: Լճից հեռու է 2կմ-ով: Տեղայնքը հարմար է աղբավայրի վերակառուցման ամար:



2.3 Մարտունու տարածաշրջան

1) Մարտունու քաղաքային համայնքի աղբավայրը գտնվում է բնակավայրից 5-6կմ հարավ-արևելք: Աղբավայրը նախատեսված է նաև ՀՀ կառավարության կողմից՝ հաստատված «Մարտունու քաղաքային համայնքի գլխավոր հատակագծով»:

Աղբավայրի տարածքը 2.0-3.0հա է, գործում է 1996 թվականից: Աղբավայրը գտնվում է երկու բլրակների միջև՝ սահմանափակված հյուսիս-արևելքից և հարավ-արևելքից ձգվող լանջերով, որոնք ստեղծում են պայտածև տարածք՝ բաց միայն արևելյան կողմից: Հարավ-արևելյան բլրակի աղբավայրին նայող լանջի վերևի հատվածները ծառապատված են:

Բլրակների հետևում կա հեղեղաբեր ձորակ, որտեղ ըստ «Մարտունու քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի», նախատեսված են հակահեղեղային միջոցառումներ:



Տարածքը հարմար է աղբավայրի վեռակառուցման համար:

2) Ձորագյուղի գյուղական համայնքի աղբավայրը գտնվում է բնակավայրի հյուսիս-արևելյան մասում, «Սանգատ» կիկլոպյան ամրոցի հարևանությամբ: Հատկացված է ՀՀ կառավարության 30.05.2002թ. N 706-Ն որոշմամբ: Աղբավայրը չի գործում, գտնվում է պատմամշակույթային հուշարձանի պաշտպանիչ գոտում: Հետագա շահագործումը անթույլատրելի է:

3) Լիճքի գյուղական համայնքի աղբավայրը 0.8հա տարածքով (հատկացված ՀՀ կառավարության 20.06.2002թ. N 870-Ն որոշումով) գտնվում է գյուղից հարավ-արևելք, հեռավորության պատճառով չի շահագործվել:

Համայնքի մյուս աղբավայրը գտնվում է գյուղի հարավ-արևմտյան ծայրամասում, չի պահպանված բնակելի թաղամասից հեռավորության սանիտարական նորմը, դադարեցվել է շահագործումը:

1995թ. ավագանու որոշմամբ ընտրվել է երրորդ աղբավայրը, բայց նույնպես դադարեցրել են շահագործումը (ձմեռային սեզոնում աղբահանումը չի կատարվում):

4) Ծակքարի գյուղական համայնքի աղբավայրը գտնվում է բնակավայրից 10-15կմ հարավ-արևմուտք, հատկացված է ՀՀ կառավարության 30.05.2002թ. N 707-Ն որոշումով: Զբաղեցնում է 0.7հա տարածք, գտնվում է ձորի լանջին, 2250մ-ից բարձր բարձրությունների վրա: Ձմռան ամիսներին հնարավոր չէ շահագործել: Աղբավայրի հետագա շահագործումը նպատակահարմար չէ:

5) Վաղաշենի գյուղական համայնքի աղբավայրը գտնվում է բնակավայրից 10-12 կմ հարավ-արևմուտք: Հատկացված է ՀՀ կառավարության որոշումով 20.06.2002թ. N 856-Ն որոշումով: Աղբավայրը զբաղեցնում է 3.0հա տարածք: Հեռավորության և ձմեռային ամիսների դժվարությունների պատճառով չի շահագործվում:

Աղբը լցնում են Երևան-Վարդենիս ավտոմայրուղու եզրին, հողով ծածկում: Աղբավայրի հետագա շահագործումը անթույլատրելի է:

6) Զոլաքարի գյուղական համայնքի աղբավայրը գտնվում է բնակավայրից արևմուտք, զբաղեցնում է 0.7հա տարածք, մոտ է գտնվում բնակավայրին և սեփականաշնորհված հողերին: Աղբավայրի հետագա շահագործումը նպատակահարմար չէ:

7) Վերին Գետաշենի գյուղական համայնքի աղբավայրը գտնվում է բնակավայրի հարևանությամբ՝ հյուսիս-արևմտյան մասում, հատկացված է ՀՀ կառավարության 01.11.2002թ. N 1054-Ն որոշումով, զբաղեցնում է 1.8հա տարածք: Աղբավայրի հետագա շահագործումը նպատակահարմար չէ:

8) Վարդաձորի գյուղական համայնքի աղբավայրը գտնվում է բնակավայրից 10-15կմ հարավ-արևմուտք: Հատկացված է ՀՀ կառավարության 18.07.2002թ. N 1029-Ն որոշումով, զբաղեցնում է 1.0հա տարածք: Հեռավորության և ձմռան ամիսների դժվարությունների պատճառով չի շահագործվում: Ավագանու որոշմամբ ընտրված է նոր տարածք՝ բնակավայրից հյուսիս-արևելք, սեփականաշնորհված հողերի հարևանությամբ: Տարածքը հարթ է, քարքարոտ, շրջակայքում կան ճահիճներ, քամիները աղբը կարող են տարածել տասնյակ կիլոմետրեր: Ընտրված նոր տարածքը նպատակահարմար չէ օգտագործել որպես աղբավայր:




9) Վարդենիկի գյուղական համայնքի աղբավայրը գտնվում է բնակավայրի հարավային մասում, հատկացված է ՀՀ կառավարության 29.08.2002թ. N 1345-Ն որոշմամբ: Զբաղեցնում է 1.5հա տարածք: Աղբավայրը գործում է, աղբը պարբերաբար ծածկվում է հողաշերտով և հարթեցվում: Աղբավայրը ենթակա է պահպանման՝ համապատասխանեցնելով սանիտարկան նորմերին (ցանկապատում, ցանկապատի երկարությամբ ծառապատում, տոփանում և այլն):



10) Ծովինարի գյուղական համայնքի աղբավայրը գործում է 2008թ.-ից ավագանու որոշմամբ: Աղբավայրը տեղադրված է Երևան-Վարդենիս ավտոմայրուղու եղրին, գերեզմանոցի հարևանությամբ: Աղբավայրի հետագա շահագործումը անթույլատրելի է:



11) Գեղահովիտի գյուղական համայնքի աղբավայրը գտնվում է գյուղից 6-8կմ հարավ, Մարտունի-Եղեգնաձոր ճանապարհից 600-800մ հեռավորության վրա, շահագործված հանքի տարածքում: Աղբավայրը կարելի է շահագործել՝ համապատասխանեցնելով գործող սանիտարական նորմերին:



Մարտունի-Եղեգնաձոր մայրուղու և աղբավայրի միջև կա տարերայնորեն ձևավորված աղբավայր:

12) Երանոսի գյուղական համայնքի աղբավայրը ՀՀ կառավարության 15.08.2002թ. N 1218-Ն որոշմամբ տեղադրված է բնակավայրից 5-6կմ հյուսիս-արևելք, Երևան-Գավառ ճանապարհի հարևանությամբ, զբաղեցնում է 1.4հա տարածք: Տարածքը քիչ թեքություն ունեցող սարահարթ է՝ ծածկված ժայռային ապարներով՝ քարացրոններով (չինգիլներ), բացարձակ բարձրությունները տատանվում են 2100-2250մ: Աղբավայրը չի համապատասխանում սանիտարական նորմերին՝ ցանկապատված չէ, աղբը չի հողաձածկվում և տոփանվում: Քամին աղբը տեղափոխում է տասնյակ կիլոմետրեր:

Աղբավայրի հետագա շահագործումը նպատակահարմար չէ:



2.4 Վարդենիսի տարածաշրջան

1) Վարդենիսի քաղաքային համայնքի աղբավայրը գտնվում է բնակավայրից 2.0-2.5 կմ արևելք, դեպի Սուտքի համայնք տանող ճանապարհին հարող հատվածում, հատկացված է ՀՀ կառավարության 13.02.2003թ. N 144-Ն որոշումով, ինչպես նաև ամրագրվել է ՀՀ կառավարության կողմից հաստատված «Վարդենիսի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի» հիմնադրույթներով:

Աղբավայրը զբաղեցնում է 4.0հա տարածք, ստեղծված է 8-10մ-ոց փոսորակ, աղբը հողաձածկվում է, տոփանվում: Տարածքը հարմար է աղբավայրի վերակառուցման համար:



Գործող աղբավայրից 6.0-8.0կմ դեպի հարավ հատկացված է նոր տեղամաս աղբավայրի համար (3.0-5.0հա), դեռ չի գործում:

2) Կարճադըյուրի գյուղական համայնքի աղբավայրը տեղադրված է բնակավայրից հարավ արևելք 2.0-2.5կմ հեռավորության վրա: Աղբավայրը շրջապատված է սեփականաշնորված հողերով: Բացարձակ բարձրությունները տատանվում են 2150-2250մ: Ձմեռային ծանր պայմանների հետևանքով չի շահագործվում:

2.5 Ճամբարակի տարածաշրջան

1) Ճամբարակի քաղաքային համայնքի աղբավայրը գտնվում է բնակավայրից դեպի Վահանի գյուղական համայնք տանող ճանապարհի միջև: Չկա աղբավայրի սահմանազատում և ցանկապատ: Տարածքը շատ փոքր է, մոտ 1.0հա, շահագործվում է 30 տարի, աղբավայրում այլևս տոփանման աշխատանքներ իրականացնել հնարավոր չէ, այն սպառել է իր հնարավորությունները: 1-2 տարուց հետո աղբավայրը շահագործել չի լինի: Աղբավայրը ենթակա է լիկվիդացման: Նոր աղբավայրի տեղի ընտրությունը խիստ դժվարանում է տարածքային դեֆիցիտի, ձմեռային սեզոնի և ռելիեֆային բարդ պայմանների պատճառով:



2) Արտանիշի գյուղական համայնքի աղբավայրը գտնվում է բնակավայրից հյուսիս-արևելք ընկած տարածքում, գտնվում է 2 բլուրների արանքում: Չկա աղբավայրի սահմանափակում և

ցանկապատ: Կուտակված աղբը հեռանում է մակերևույթային ջրերով: Աղբավայրի հետագա շահագործումը նպատակահարմար չէ:

3) Շորժայի գյուղական համայնքի աղբավայրը գտնվում է բնակավայրերից 2-3կմ հյուսիս-արևելք, հատկացված է ՀՀ կառավարության 19.02.2004թ. N 172-Ն որոշումով, գործում է 2007թ., տարածքը (1.0հա): Տարածքը հնարավորություն ունի ընդլայնվելու 3.5-4.0հա (նախատեսվում է նաև համայնքի նոր մշակվող գլխավոր հատակագծով):



Բացի գոյություն ունեցող աղբավայրերից մարզի տարածքում կան բազմաթիվ տարերայնորեն ձևավորված աղբավայրեր:

Սևանի ավազանի տարածքում ավտոճանապարհների եզրերին և դրա հարակից տարածքներում առկա են աղբի (սննդամթերքի, շինարարական, բուսական և այլն) կուտակումներ: Նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին կուտակված աղբավայրերից առավել թեթև աղբը (պոլիէթիլենային տոպրակներ, թուղթ և այլն) տարածվել է ընդգրկելով ավելի մեծ տարածքներ:

Ըստ տարածքների ապօրինի աղբաթափման վայրերն են.

1) Գավառ, Սևան, Ծովագյուղ, Դիլիջանի թունել, Ծովագյուղ-Դրախտիկ, Սևան-Դոմաշեն ուղղություններով:

- Լճափ - Քամու տարածած աղբ (տոպրակներ) ողջ տարածքում:
- Ծովագարդ - «Խաչ և սուր» հուշարձանի մոտ նոր լցված շինարարական աղբ, վագոն-տնակների մոտ աղբի կուտակում, տարածքում քամու կուտակած աղբ:
- Նորաշեն - Քամու տարածած տոպրակների առկայություն:
- Չկալովկա - «Նոյլենդ» սննդի օբյեկտի հանդիպակած տարածքում գտնվող Սևանի քաղաքային աղբաթափման տարածքում քամիների հետևանքով աղբը տարածվել է: Ճանապարհից դեպի վերև առկա է կուտակված աղբ: «Երիտասարդական» հանգստի գոտու աղբի տեղափոխումից և այրումից հետո առկա է աղբի կուտակման (ապակյա շշեր), քամուց տարածված տոպրակներ:

- Լճաշեն – էլ ենթակայանի ողջ տարածքում առկա է տարածված աղբ: ԱԳԼՃԿ-ի և տեղ. սպասարկման կայանի տարածքում առկա է տարածված աղբ.
- Լճաշեն - Ծովագյուղ ուղղությամբ (ք. Սևան).
 - «Անդրանիկ» սննդի օբյեկտի հարևանությամբ գտնվող տարածքից մինչև ԱԳԼՃԿ աղբի առկայության, տարածված աղբ՝ մինչև Սևանի հիվանդանոց (մայրուղու աջակողմյան հատված):
 - «Սպիտակ տուն» հանգստի գոտուց դեպի «Ախթամար» համալիրի ուղղությամբ (մայրուղու ձախակողմյան հատված) բարձունքի վրա առկա է տարածված աղբ:
 - Սևանի նախկին «Հանրախանութ»-ից մինչև «Ախթամար» համալիր առկա են աղբի կուտակումներ և տարածված աղբ:
- 2) Ծովագյուղ-Դրախտիկ ուղղությամբ.
 - Ծովագյուղ-Դրախտիկ մայրուղու սկզբնամասում ճանապարհից աջ (անտառի հատված) և ձախ կողմերում առկա է աղբ:
 - Ծովագյուղ համայնքի մատույցներում, ճանապարհի մոտ՝ ավազաթմբի տակ առկա է կուտակված աղբ:
 - Ծովափ իջնող ճանապարհին, ե/գ կայարանի մերձակայքում առկա են աղբի կուտակումներ:
- Ծովագյուղ-Դիլիջանի թունել ուղղությամբ հատվածը մաքուր է:
 - Սևան - Դղմաշեն ուղղությամբ
 - Սևանի կողմից դեպի Վարսեր համայնք և պետ.ավտոտեսչության տեղամաս առկա է տարածված աղբ:
 - ԱԳԼՃԿ-ների կողմից իրականացվում էին տարածքների սանիտարական մաքրման աշխատանքներ:
- 3) Գավառ, Նորատուս, Հրանոս, Ձորագյուղ, Ծակքար, Ն.Գետաշեն, Մարտունի, Վաղաշեն, Զոլաքար, Վարդենիկ, Ծովինար, Արծվանիստ, Կարճաղբյուր համայնքների ուղղությամբ:
 - Գավառ - «Գեղամա» առևտրի կենտրոնի հանդիպակած տարածքում առկա է քանու բերված աղբ:
 - Նորատուս - անվադողերի վերանորոգման կետի և ձկան շուկայի տարածքում առկա է քանու բերած աղբ:
 - Արծվաքարի ափամերձ վագոն-տնակներ, Ազգային պարկի տարածք - Տարածքում առկա է աղբի կուտակում:
 - Կարմիրգյուղի վագոն-տնակներ, Ազգային պարկի տարածք - տարածքում առկա է աղբի կուտակում:
 - Կարմիրգյուղի գոմեր (ճանանապարհային բաժին) - առկա են աղբի կուտակումներ:
 - Երանոս - աղբաթափման համար նախատեսված տարածքը մաքրելուց հետո նորից լցվել է: Շինանյութի խանութի և հանդիպակած տարածքներում առկա է տարածված աղբ:
 - Ձորագյուղ - համայնքի մուտքի մոտ (ՃՇՇ և Ազգային պարկ) առկա է աղբի կուտակում:
 - Ծակքար - կամրջի մոտ առկա է աղբի կուտակում, քանու տարածած աղբ:

- Լիճք - առկա է շինարարական և քանու տարածած աղբ:
 - Ն.Գետաշեն - համայնքի մուտքի մոտ, շուկայի և հարակից տարածքներում էլ. ենթակաանի մոտ, բենզալցակայանի աջ մասում առկա են աղբի կուտակումներ:
 - ք.Մարտունի - քաղաքի մուտքի աջակողմյան մասում առկա է աղբի կուտակում:
 - Վաղաշեն - սղոցարանի շրջակա տարածքը աղբաշատ է:
 - Ջոլաքար - համայնքի մուտքի մոտ և հարակից տարածքներում՝ առկա են աղբի կուտակումներ և քանու տարածած աղբ:
 - Վարդենիկ - Ջոլաքար համայնքի համար նախատեսված աղբանոցից դեպի Վարդենիկ համայնք առկա է քանու տարածած աղբ՝ դաշտի երկայնքով:
 - Ծովինար - ճանապարհի աջ և ձախ կողմերում առկա են աղբի կուտակումներ:
 - Արծվանիստ - ձկնավաճառների տարածքում (ցայտաղբյուրի շրջակայք), ձկնորսների լիճ մտնելու տարածքում և ՃՃՇ մայրուղու հատվածում առկա են աղբի կուտակումներ:
 - Կարճաղբյուր- ճանապարհամերձ տարածքում, սննդի օբյեկտի տարածքում, լիճ թափվող գետի ափին առկա են աղբի կուտակումներ:
- 4) Գավառ – Հայրավանք, Բերդկունք, Լճափ, Ծովագարդ, Չկալովկա, Նորաշեն, Լճաշեն համայնքները և Սևան-Երևան մայրուղու ուղղությամբ.
- Ծովագարդ - «Խաչ և սուր» հուշարձանի ճանապարհամերձ տարածքում կուտակված աղբը հողով ամբողջությամբ թաղված չէ: Ծովագարդ - Նորաշեն համայնքների սահմանագծի երկու կողմերում առկա է քանու բերած աղբ:
 - Չկալովկա «Նոյլենդ» և «Կենդանի ձուկ» սննդի օբյեկտների, բենզալցակայանի դիմացի տարածքներում և «Երիտասարդական» լողափում առկա են աղբի կուտակումներ: Չկալովկա և Լճաշեն համայնքների սահմանագծում տեղակայված Սևանի ԳԳՄ-ի լցակայանի շրջակայքը աղբաշատ է:
 - Լճաշեն - «Անտառային մեղեդի» սննդի օբյեկտի հանդիպակած տարածքում ճանապարհով դեպի Լճաշեն համայնք և գոմերի ճանապարհամերձ տարածքներում առկա է քանու բերած և տարածված աղբ: ԱԳԼՃԿ-ի տարածքում առկա է աղբի կուտակում:
 - Գագարինավան – 2 ԱԳԼՃԿ-ների տարածքում առկա են աղբի կուտակումներ:
 - Սևանի պետավտոտեսչություն - Պետավտոտեսչության Սևանի տեղամասի հարևանությամբ առկա է աղբի կուտակում:
 - Սևան - Երևան մայրուղու Սևան ՃՃՇ ԲԲԸ-ի տարածք - Սևան - Երևան մայրուղու ճանապարհամերձ ծառերի շրջակայում առկա է կուտակված աղբ:
 - Սևանի ավտոտեխսպասարկման կայանի տարածք - կայանի տարածքում առկա է քանու տարածած աղբ:
 - Վարսերի գյուղական համայնքը տանող ճանապարհի երկարությամբ,
 - Երևան – Վարդենիս ճանապարհի երկարությամբ,
 - Չկալովկայի կոնսերվացված աղբավայրի շրջակայքը,

- Դեպի գյուղական համայնքներ տանող ճանապարհի վրա,
- Ճամբարակ տանող ճանապարհի երկարությամբ:

Ստորև բերված N 1 ամփոփ աղյուսակում տրվում է աղբավայրերի գոյություն ունեցող վիճակը:

Աղյուսակ N 1

	Համայնքի աղբավ.	տարածքը (հա)	հատկացված է որոշումներով	Գործում է	հաշվարկայի ն աղբի տարեկան ծավալը 1.3 (մ3 /տարի)*	Լրացուցիչ տեղեկություններ
I	Սևանի տարածաշրջան					
1	2	3	4	5	6	7
1	Չկալովկայի գյուղական համայնք	2.5	ՀՀ կառ. 2006 N1773-Ն	2008	Սևան-28.3 Լճաշեն-5.59 Վարսեր-2.21 Չկալ.-0.65	Չկալովկայի աղբ-ը սպասարկում է Սևան քաղաքին, Վարսեր, Լճաշեն համայնքներին
2	Լճաշենի գյուղական համայնք	2.0	ՀՀ կառ. 2002 N 813-Ն	2002	-	Չի գործում, աղբը պայմանագրով տեղափոխվում է Չկալովկա
3	Ծովագյուղի գյուղական համայնք	1.0	Ավագա- նու որոշում	2010	5.2	Գործում է
4	Վարսերի գյուղական համայնք	2.0	ՀՀ կառ. 2002 N 826-Ն	2002	-	Չի գործում, աղբը պայմանագրով տեղափոխվում է Չկալովկա
5	Զովաբերի գյուղական համայնք	0.5	ՀՀ կառ. 2003 N 172-Ն	2003	2.08	Չի գործում
	Ընդամենը				44.03	
II	Գավառի տարածաշրջան					
1	Գանձակի գյուղական համայնք	1.5	ՀՀ կառ. 2001 N1054-Ն	2008	5.46	Հատկացված է 2001թ. չի գործում, տեղափոխված է ավելի հարմար տեղ

2	Նորատուսի գյուղական համայնք	5.0	Ավագանու որոշում		Գավառ-33.41 Նորատ.-7.41	Սպասարկում է նաև Գավառ քաղաքը
3	Սարուխանի գյուղական համայնք	2.0	ՀՀ կառ. 2001 N1054-Ն	2001	-	Չի գործում, աղբը տեղափոխվում է Կարմիր գյուղի աղբավայր
4	Կարմիրգյուղի գյուղական համայնք	2.5-3.0	Ավագանու որոշում	2008	Սարուխան-10.01 Կարմիրգյուղ-7.02	Սպասարկում է Կարմիրգյուղ և Սարուխան համայնքներին
5	Ծովագարդի գյուղական համայնք.	1.3-2.0	ՀՀ կառ. 2002 N1449-Ն		2.6	
	Ընդամենը				65.91	
III	Մարտունու տարածաշրջան					
1	Մարտունու քաղաքային համայնք	4.5	Ավագանու որոշմամբ (գլխավոր հատկագծով)	1995	15.73	Սպասարկում է Մարտունի քաղաքին
2	Ձորագյուղի գյուղական համայնք	1.6	ՀՀ կառ. 2002 N706-Ն		5.72	Չի գործում
3	Լիճքի գյուղական համայնք	0.8-1.0	ՀՀ կառ. 2002 N870-Ն	1995	6.5	3 հատ, մոտ են կառուցապատմանը, չեն գործում
4	Ծակքարի գյուղական համայնք	0.7	ՀՀ կառ. 2002 N707	2002	3.12	Չի գործում, ձմռանը անբարենպաստ է
5	Վաղաշենի գյուղական համայնք	3.0	ՀՀ կառ. 2002 N856-Ն	2002	4.68	Չի գործում, աղբը թափում են մայրուղու հարևանությամբ
6	Վարդաձորի գյուղական համայնք	1.0	ՀՀ կառ. 2002 N1029	2002	3.77	Չի գործում
7	Վարդենիկի գյուղական համայնք	1.5	ՀՀ կառ. 2002 N1345-Ն	2005	11.44	Գործում է
8	Ծովինարի գյուղական համայնք	0.2	Ավագանու որոշում	2008	5.85	Մայրուղուն մոտ է, լիկվիդացման ենթակա է
9	Գեղահովիտի գյուղական համայնք	1.0	Ավագանու որոշում	2007	7.41	Գործում է

10	Երանոսի գյուղական համայնք	1.4	ՀՀ կառ. 2002 N1218-Ն	2002	6.89	Գործում է
11	Վ. Գետաշենի գյուղական համայնք	1.5	ՀՀ կառ. 2002 N1054-Ն		6.5	Չի գործում
12	Զոլաքարի գյուղական համայնք	0.5	Ավագանու որոշում		8.06	Գործում է
	Ընդամենը				85.67	
IV	Վարդենիսի տարածաշրջան					
1	Վարդենիսի քաղաքային համայնք	5.0	ՀՀ կառ. 2003 N144-Ն	1992	16.51	Գործում է
2	Կարճաղբյուրի գյուղական համայնք	1.3	ՀՀ կառ. 2002 N1076-Ն	2002	2.99	Չի գործում
	Ընդամենը				19.5	
V	Կրասնոսելսկի տարածաշրջան					
1	Ճամբարակի քաղաքային համայնք	2.0	Ավագանու որոշում	9.62	9.62	Գործում է
2	Շորժայի գյուղական համայնք	1.0	ՀՀ կառ. 2004 N 172-Ն	2007	0.78	Գործում է
3	Արտանիշի գյուղական համայնք	2.0	Ավագանու որոշում	1989	0.91	Գործում է
	Ընդամենը				11.31	
	Մարզում				226.42	

*) մ³/տարի - ըստ աղբավայրերի նախագծման և շահագործման ձեռնարկի մեկ մարդու համար աղբակուտակման նորմը ընդունված է մինչև 1.3մ³/տարի: Գեղարքունիքի մարզի բնակչության (առ 01.01.2010թ.) աղբակուտակման հաշվարկային քանակները (աղբակուտակման նորմը մեկ մարդու համար 1.3մ³/տարի) տրված է ըստ «Աղբավայրերի նախագծում և շահագործում» ձեռնարկի:

Աղյուսակ N 2

Տարածաշրջան	Ընդամենը (բնակչություն հազ.մարդ)	Աղբի հաշվ. քանակը հազ.մ ³ /տարի	Քաղաքային բնակչ. հազ.մարդ	Աղբի հաշվ. քանակը հազ.մ ³ /տարի	Գյուղական բնակչ. հազ.մարդ	Աղբի հաշվ. քանակը հազ.մ ³ /տարի
1	2	3	4	5	6	7

Գավառի տարածաշրջան	57.7	75.0	25.7	33.4	32.0	41.6
Մարտունու տարածաշրջան	86.7	112.7	12.1	15.73	74.6	96.98
Մարտունու տարածաշրջան	38.9	50.5	12.7	16.5	26.2	34.0
Կրասնոսելսկի տարածաշրջան	15.9	19.8	7.4	9.62	8.5	10.2
Սևանի տարածաշրջան	42.4	55.12	21.8	28.34	20.6	26.78
Ընդամենը	241.6	314.1	79.7	103.6	161.9	210.5

Ստորև բերված աղյուսակում տրվում է աղբավայրերի հեռանկարային կարգավիճակը:

Աղյուսակ N 3

	Համայնքի աղբավ.	Աղբավայրի կարգավիճակը
I	Սևանի տարածաշրջան	
1	Չկալովկայի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
2	Լճաշենի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
3	Ծովագյուղի գյուղական համայնք	Ենթակա է պահպանման: համապատասխանեցնելով գործող սանիտարական նորմերին: Աղբամշակման գործարանի կառուցումից հետո ենթակա է լիկվիդացման:
4	Վարսերի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
5	Ջովաբերի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
II	Գավառի տարածաշրջան	
1	Գանձակի գյուղական համայնք	Ենթակա է պահպանման: համապատասխանեցնելով գործող սանիտարական նորմերին: Աղբամշակման գործարանի կառուցումից հետո ենթակա է լիկվիդացման:
2	Նորատուսի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
3	Սարուխանի գյուղական համայնք	Աղբը տեղափոխվում է Կարմիրգյուղ
4	Կարմիրգյուղի գյուղական համայնք	Ենթակա է պահպանման: համապատասխանեցնելով գործող սանիտարական նորմերին: Աղբամշակման գործարանի կառուցումից հետո ենթակա է լիկվիդացման:
5	Ծովագարդի գյուղական համայնք	Ենթակա է վերակառուցման
III	Մարտունու տարածաշրջան	

1	Մարտունու քաղաքային համայնք	Ենթակա է վերակառուցման
2	Ձորագյուղի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
3	Լիճքի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
4	Ծակքարի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
5	Վաղաշենի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
6	Վարդաձորի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
7	Վարդենիկի գյուղական համայնք	Ենթակա է պահպանման՝ համապատասխանեցնելով գործող սանիտարական նորմերին: Աղբամշակման գործարանի կառուցումից հետո ենթակա է լիկվիդացման:
8	Ծովինարի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
9	Գեղահովիտի գյուղական համայնք	Ենթակա է պահպանման՝ համապատասխանեցնելով գործող սանիտարական նորմերին: Աղբամշակման գործարանի կառուցումից հետո ենթակա է լիկվիդացման:
10	Երանոսի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
11	Վ.Գետաշենի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
12	Զոլաքարի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
IV	Վարդենիսի տարածաշրջան	
1	Վարդենիսի քաղաքային համայնք	Ենթակա է վերակառուցման
2	Կարճաղբյուրի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
V	Կրասնոսելսկի տարածաշրջան	
1	Ճամբարակի քաղաքային համայնք	Ենթակա է լիկվիդացման
2	Շորժայի գյուղական համայնք	Ենթակա է վերակառուցման
3	Արտանիշի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման

3. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԲԱԾԽՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՈՒՐՎԱԳԻԾ

Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքի համընդհանուր զարգացմանը նպաստող քաղաքաշինական ռացիոնալ պայմանների ստեղծումը պետք է ուղեկցվի շրջակա միջավայրի պահպանմանը ուղղված միջոցառումների հետևողական իրականացմամբ, որոնց թվում կարևոր նշանակություն ունի նաև աղբահեռացման և աղբի վնասագերծման խնդիրները:

Մարզի տարբեր տարածաշրջանների տարածքային հնարավորությունների բացահայտման համար տարածքի բնական և ուրբանիզացված միջավայրի քաղաքաշինական, էկոլոգիական կապերի ընդհանրության հաշվառումով կատարվել է վերլուծություն և տրվել է համալիր գնահատական:

Համալիր գնահատականը տրվել է բնական և հատակագծային բոլոր գործոնների հաշվառումով հատուկ ուշադրություն դարձնելով

- Հողերի ռացիոնալ օգտագործման խնդիրներին,
- Սանիտարական պահպանման նորմերի ապահովման հնարավորությանը,
- Աղբահեռացման համար անհրաժեշտ տրանսպորտային մատչելիության հնարավոր ապահովումը,
- Անհավասարակշռված տարաբնակեցման պայմաններում (Մարտունու, Գավառի, Սևանի տարածաշրջաններում բնակչության և բնակավայրերի խտության էկոլոգիական չափանիշները գերազանցող ցուցանիշները) աղբավայրերից օգտվող բնակչության հնարավոր թվի հավասարաչափ ապահովումը (զճ. N 4):

Համալիր գնահատական է տրվել բոլոր 27 աղբավայրերին և ընտրվել է ամենաօպտիմալ տարբերակը՝ առանձնացնելով 5 աղբավայր, որոնք ըստ համալիր գնահատման բարենպաստ են շահագործման համար (զճ. N 2, բացի դրանից 5 վերաբեռնման կայանները առանձին-առանձին ներկայացված են համայնքի 1:25000 մասշտաբի քարտեզների վրա):

Ընտրված աղբավայրերը նախատեսվում են որպես վերաբեռնման կայաններ՝ բացառելով աղբի թաղումը Սևանի ավազանում, տեղափոխումով և մշակումով Գագարինում նախատեսվող աղբամշակման գործարանում:

Վերաբեռնման աղբավայրերի վերակառուցումը ներառում է հիմնականում հատակի կոշտ ծածկի ապահովում (բետոնապատում կամ բետոնե սալիկների տեղադրում), ջրամեկուսացում, մակերևութային ջրերի հեռացման առվակների կառուցում, ցանկապատում, ցանկապատի երկարությամբ ծառապատում, օժանդակ շինությունների կառուցում, ինժեներական անհրաժեշտ կոմունիկացիաների անցկացում, պակետավորող մամալիչների տեղադրում և այլն:

Վերաբեռնման կայանների սանիտարական պահպանման գոտին 100մ է (СНП 2.07.01-89 աղյուսակ 12):

3.1 Ճամբարակի տարածաշրջանի աղբավայրը

Շորժա գյուղական համայնքի գործող աղբավայրի տարածքը ընտրված է վերակառուցման համար:

- Վերակառուցման համար ակտիվ (դրական) գործոններ են.
- Տարածքի բացարձակ նիշերը ծովի մակերևույթից՝ 1940-1945մ,
- Տարածքի տեղադրվածությունը գյուղատնտեսության համար անօգտագործելի հողերի վրա,
- Տարածքի ընդլայնման հնարավորությունները (1.0-ից մինչև 3.5-4.0հա),
- Քամիների գերակշռող հյուսիս-արևմտյան և արևմտյան ուղղությունները (բնակավայրերից դեպի շրջափակող լեռները),
- Ոչ տեսանելիությունը ակտիվ ռեկրեացիոն գոտուց,
- Բարենպաստ ինժեներատեխնիկական պայմանները (գրունտային ջրերի բացակայություն, ժայռային, կիսաժայռային գրունտները),
- Բնակավայրից սանիտարական պահպանման գոտու բավարար հեռավորությունը,
- Մոտեցման ճանապարհների հնարավորությունը,
- Ջրամատակարարման աղբյուրի բարենպաստ հեռավորությունը,

Սևանա լճի արևելյան ափում գտնվող Շորժայի գյուղական համայնքի աղբավայրերը կարող է սպասարկել Սևանի ջրհավաք ավազանում գտնվող Կրասնոսելսկի տարածաշրջանի, Վարդենիսի տարածաշրջանի հյուսիսային հատվածների բնակավայրերին, Սևանա լճի արևելյան, հյուսիս-արևելյան, հարավ-արևելյան ափին գտնվող ռեկրեացիոն օբյեկտներին՝ 13.0-17.0հազ. բնակչությամբ: Տրանսպորտային մատչելիության շտապիղը տատանվում է 15-35կմ: Սահմանափակող գործոններն են.

- Աղբի տեղափոխման տրանսպորտային մատչելիությունը (մինչև 35կմ),
- Կուտակված աղբի վնասագերծման անհրաժեշտությունը:

3.2 Վարդենիսի տարածաշրջանի աղբավայրը

Վարդենիսի քաղաքային համայնքի գործող աղբավայրը ընտրված է վերակառուցման համար:

Վերակառուցման համար ակտիվ (դրական) գործոններ են.

- Տարածքի բացարձակ նիշերը ծովի մակերևույթից՝ 1960-1965մ,
- Տեղադրվածությունը տարածաշրջանի կենտրոնական մասում մյուս համայնքներից տրանսպորտային բարենպաստ հեռավորության վրա,
- Տարածքի ընդլայնման հնարավորությունը (մինչև 5.0հա),
- Բարենպաստ հեռավորությունը ակտիվ ռեկրեացիոն գոտուց,
- Բնակավայրից սանիտարական պահպանման գոտու բավարար հեռավորությունը,
- Բարենպաստ ինժեներատեխնիկական պայմանները (կիսաժայռային խճակոպճային) ապարների առկայության, գրունտային ջրերի խորը տեղադրվածության (15մ-ից խորը)
- Ջրամատակարարման աղբյուրի բարենպաստ հեռավորությունը:

Սահմանափակող գործոններն են.

- Կուտակված աղբի վնասագերծման անհրաժեշտությունը,

- Քամիների գերակշռող արևմուտքից փչող ուղղությունը (ամառային և ծմեռային ամիսներին), անհրաժեշտ են ծառապատման աշխատանքներ քամիների ուժը փոքրացնելու համար (քաղաքի գլխավոր հատակագծով կառուցապատման և աղբավայրի միջև նախատեսված է անտառապուրակային գոտի):

- Սևանա լճի հարավ-արևելյան ափում գտնվող Վարդենիսի քաղաքային համայնքի աղբավայրը կարող է սպասարկել Վարդենիսի տարածաշրջանի 30 համայնքներին և ռեկրեացիոն օբյեկտներին 39.0-41.0 հազար ընդհանուր բնակչությամբ: Տրանսպորտային մատչելիության շառավիղը տատանվում է 15.5-19.0կմ:

3.3 Մարտունու տարածաշրջանի աղբավայրը

Մարտունու քաղաքային համայնքի աղբավայրը ընտրված է վերակառուցման համար:

Վերակառուցման համար ակտիվ (դրական) գործոններն են.

- Տարածքի բացարձակ նիշերը ծովի մակերևույթից՝ 2020-2030մ,
- Քամիների գերակշռող հյուսիսից փչող ուղղությունը ամառային ամիսներին (դեպի շրջափակող լեռները),
- Տեղադրվածությունը տարածաշրջանի կենտրոնական մասում մյուս համայնքներից բարենպաստ տրանսպորտային մատչելիության գոտում,
- Բարենպաստ հեռավորությունը ռեկրեացիոն ակտիվ գոտուց,
- Բնակավայրից սանիտարական պահպանման գոտու համապատասխանությունը գործող նորմերին,
- Տեղադրվածությունը պայտաձև, երեք կողմից բլուրների լանջերով սահմանափակված ոչ տեսանելի տարածքում,
- Տարածքի ընդլայնման հնարավորություն շրջափակող լանջերի հաշվին,
- Բարենպաստ ինժեներակառուցական պայմանները (խճակուպճային ապարներ, գրունտային ջրերի խորը տեղադրվածություն):

Սահմանափակող գործոններն են.

- Կուտակված աղբի վնասազերծման աշխատանքների անհրաժեշտությունը,
- Ինժեներական նախապատրաստման միջոցառումների կիրառման անհրաժեշտությունը (հակահեղեղային միջոցառումներ՝ 7-10 բարաժների կառուցում, նախատեսված է քաղաքային համայնքի գլխավոր հատակագծով):

- Սևանա լճի հարավային ափում գտնվող Մարտունու քաղաքային համայնքի աղբավայրը կարող է սպասարկել Մարտունու տարածաշրջանի համայնքներին և ռեկրեացիոն օբյեկտներին՝ 86.0-88.0 հազար ընդհանուր բնակչությամբ: Տրանսպորտային մատչելիության շառավիղը մինչև 15-19 կմ է:

- Մարտունու քաղաքային համայնքի աղբավայրում աղբահանության գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ է նաև Մարտունի քաղաքի ճանապարհային և փողոցային

ցանցի վերակառուցում և կատարելագործում, որը կիրականացվի հաջորդ փուլում աղբահանության ծրագրի մշակման շրջանակներում:

3.4 Գավառի տարածաշրջանի աղբավայրը

Ծովագարդի գյուղական համայնքի աղբավայրը ընտրված է վերակառուցման համար:

Վերակառուցման համար ակտիվ (դրական) գործոններն են.

- Տարածքի բացարձակ նիշերը ծովի մակերևույթից՝ 1981-1985մ,
- Աղբավայրի տեղադրվածությունը սարահարթի վրա առանձնացված բլրի կենտրոնում շահագործված հանքի տարածքում, շրջափակված բլրի տարբեր բարձրության ելուստներով,
- Աղբավայրի ոչ տեսանելիությունը շրջապատից,
- Աղբավայրի ընդլայնման հնարավորությունները,
- Մոտեցման ճանապարհների առկայությունը,
- Բարենպաստ ինժեներատեխնիկական պայմանները (ժայռային, կիսաժայռային գրունտներ, գրունտային ջրերի բացակայություն),
- Ջրամատակարարման աղբյուրի բարենպաստ հեռավորությունը:

Սահմանափակող գործոններն են.

- Կուտակված աղբի վնասագերծման անհրաժեշտությունը,
- Ծովագարդի գյուղական համայնքի աղբավայրը կարող է սպասարկել Գավառի տարածաշրջանի համայնքներին և ռեկրեացիոն օբյեկտներին՝ 58.0-70.0 հազար ընդհանուր բնակչությամբ: Տրանսպորտային մատչելիության շառավիղը՝ 35-45կմ (հաշվի առնելով աղբամշակման գործարանի տրանսպորտային բարենպաստ մատչելիությունը Ծովագարդի աղբավերաբեռնման կայանից՝ նվազեցնելով աղբի վերջնական տեղափոխման շառավիղը մինչև աղբամշակման գործարան):

3.5 Սևանի տարածաշրջանի աղբավայրը

Սևանի տարածաշրջանի բնակավայրերի աղբահանությունը նպատակահարմար է իրականացնել Գեղամավանի գյուղական համայնքի հողատարածքում, որտեղ և նախատեսվում է աղբամշակման գործարանի կառուցումը: Աղբավերաբեռնման կայանի տարածքը (3.5-5.5հա) հիմնականում ընդգրկում է գյուղատնտեսության մեջ անօգտագործելի և ոչ արժեքավոր հողերի վրա: Գործարանի և աղբավերաբեռնման կայանի հողահատկացման գործընթացը նախատեսվում է իրականացնել գործարանի նախագծման փուլում՝ հաշվի առնելով գործարանի կառուցմանը ներկայացվող տեխնիկական պահանջների փոփոխման հնարավորությունները:

Գեղամավանի աղբավերաբեռնման կայանը կարող է սպասարկել Սևանի տարածաշրջանի համայնքներին Սևանի ջրհավաք ավազանից դուրս գտնվող Ճամբարակի տարածաշրջանի բնակավայրերին, ռեկրեացիոն օբյեկտներին՝ 55-77.0 հազար բնակչությամբ: Տրանսպորտային մատչելիության շառավիղը՝ մինչև 65կմ (հաշվի է առնված աղբամշակման

գործարանի և աղբավերաբեռնման կայանի մոտիկությունը, որը բացառում է աղբի կրկնակի տեղափոխությունը ավելի հեռու գտնվող Շորժայի աղբավերաբեռնման կայանից):

4. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԽՈՇՈՐԱՑՎԱԾ) ՄԻՋՈՑՆԵՐԸ

Սույն ուրվագծի շրջանակներում, դրական գործոնների գերակշռությամբ (որպես վերաբեռնման կայաններ) ընտրված աղբավայրերն են (զծ.4, զծ.5).

- 1) Վարդենիսի քաղաքային համայնքի աղբավայրը - 4.5-5.0հա
- 2) Շորժայի գյուղական համայնքի աղբավայրը - 2.0-2.5հա
- 3) Մարտունու քաղաքային համայնքի աղբավայրը - 2.5-3.0հա
- 4) Ծովազարդի գյուղական համայնքի աղբավայրը - 2.5-3.0հա
- 5) Գեղամավանի գյուղական համայնքի աղբավայրը և աղբամշակման գործարանը միասին – 8-10հա:

▪ Լիկվիդացվող և վերակառուցվող աղբավայրերում կուտակված աղբի վնասագերծումը հնարավոր է, որպես տարբերակ, իրականացնել Հրազդան քաղաքում նախատեսվող պոլիգոնում բացառելով աղբի թաղումը Սևանա լճի ավազանում:

▪ Աղբավայրերի սպասարկման շառավիղները 5 աղբավերաբեռնման կայաններում տատանվում են 15-65կմ, իսկ բնակչության թիվը՝ 55.0-88.0 հազար մարդ: Բացառություն է կազմում Սևանի ավազանի հյուսիս-արևելյան խիստ թույլ յուրացված ափը (Շորժայի աղբավայր), որի տրանսպորտային մատչելիության գոտում (մինչև 36կմ) բնակչության թիվը չի գերազանցում 17.0 հազար:

Աղբահեռացման ծրագրի մշակման շրջանակներում հնարավոր է աղբավայրերի սպասարկման շառավիղների փոփոխություններ՝ կապված համայնքների հետ համաձայնեցման խնդիրների հետ:

▪ Հետագայում վերը նշված աղբավերաբեռնման կայաններում հավաքված աղբի մշակումը նախատեսվում է իրականացնել Գագարին համայնքում (Գեղամավանի համայնքի հողեր) կառուցվելիք աղբամշակման գործարանում (նախատեսվել է նաև «Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման նախագծով» և լրամշակված տարբերակով, հաստատված ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 18-ի N 143-Ն որոշմամբ):

Որպես տարբերակ ընտրված աղբամշակման գործարանի տեխնոլոգիան մշակված է Մոսկվայի ԳԱ ֆիզքիմիայի ինստիտուտի կողմից (նոբելյան մրցանակի դափնեկիր ակադեմիկոս Սեմյոնովի կողմից): Աղբամշակման տեխնոլոգիան հիմնված է հրթիռային վառելիքի այրման պրոցեսների ուսումնասիրության վրա և ապահովում է աղբի լրիվ վնասագերծում: Նույն ինստիտուտի աշխատակից պրոֆ. Գ.Բ.Մանելիսը մշակել է նոր արտադրական սարքավորում

նույն տեխնոլոգիայով, ըստ որի գործարանի մեկ մոդուլը կարող է մշակել տարեկան 15.0 հազ.տ (69.6 հազ.մ³/տարի) կենցաղային աղբ:

Գործարանի մեկ մոդուլի (15.0 հազ.տ/տարի կամ 69.6 հազ.մ³/տարի) տեղադրումը էլեկտրաէներգիայի և երկրորդական հումքի արտադրանքով (աղբի տեսակավորում, երկրորդական հումքի առանձնացում, գազաֆիկացում, գեներատորային գազի ուտիլիզացում գոլորշիացնող կաթսայում, էներգիայի արտադրություն տուրբինում, կաթսայից հեռացող գազերի մաքրում), լրացուցիչ սարքավորումների լրիվ կոմպլեկտով կարժեճա 3.0 մլն ԱՄՆ դոլլար (առանց ԱԱՀ), ետ գնման ժամկետը՝ 1-1.5 տարի (գործարանի տեխնոլոգիան կընտրվի և կներկայացվի ծրագրի մշակման և նախագծման փուլում):

Անանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման գլխավոր ուրվագծի հիմնադրույթների իրականացման նպատակով սույն նախագծով առաջնահերթ նախատեսվում է՝

Առաջին փուլով նախատեսվում է մարզի բոլոր համայնքներում տեղադրել աղբի կոնտեյներներ՝ հաշվի առնելով բնակավայրերի բնակչության թիվը (գործող նորմը 1 մարդու համար 1.3մ³/տարի աղբի կուտակում: Հաշվի առնելով, որ գյուղական բնակչության աղբակուտակման նորմը շատ ավելի ցածր է, քան ընդունված նորմը, հաշվարկներում կարող են լինել փոփոխություններ, որոնց ճշգրտումը հնարավոր է միայն առանձին ծրագրի մշակման շրջանակներում): Աղբահանության գործընթացի կազմակերպման համար առաջարկված ենթակառուցվածքները և մեխանիզմները ընտրված են որպես մեկ տարբերակ: Ծրագրի մշակման ընթացքում հնարավոր են փոփոխություններ:

Ըստ գործող նորմի (մեկ մարդուն 1.3մ³/տարի), յուրաքանչյուր օր մեկ մարդուց կուտակվում է 0.003մ³ աղբ, 1000 մարդու հաշվարկով օրական 3մ³ աղբ: 1.1մ³ ծավալով կոնտեյներ տեղադրման դեպքում ամբողջ գյուղական բնակչության համար կպահանջվի 480-500 կոնտեյներ, մեկ կոնտեյների արժեքը՝ 213.0 հազ.դրամ: Ընդամենը գյուղական բնակչությանը կոնտեյներով ապահովելու համար կպահանջվի 102.0-106.5 մլն դրամ: Քաղաքային բնակչության համար (79.7 հազար մարդ) կպահանջվի 230-250 հատ կոնտեյներ՝ 49.0-53.0 մլն դրամ արժողությամբ: Ամբողջ մարզի բնակավայրերում կոնտեյներներ տեղադրելու համար կպահանջվի 150.0-160.0 մլն դրամ, ներառելով նաև կոնտեյներների հարթակների կառուցումը (կոնտեյներների տեսականին և արժեքները տրված են հավելվածում):

Կոնտեյներների տեղափոխման համար անհրաժեշտ աղբատար մեքենաների քանակը ընտրված է 15-20 հատ: Յուրաքանչյուր մեքենայի տարողությունը 7մ³, խտացման գործակիցը 7/1: Յուրաքանչյուր մեքենայում կարող է տեղավորվել 45-48 կոնտեյների աղբ: Աղբատար մեքենայի արժեքը (տեղափոխում մինչև Երևան, ԱԱՀ ներառմամբ) կազմում է 2 580000 ռուբլի: 15-20 մեքենայի արժեքը կկազմի 0.5-07 մլրդ դրամ:

- Առաջին փուլում անհրաժեշտ է նաև պահպանման ենթակա 5 աղբավայրերի (Վարդենիկի, Գեղիովիտի, Կարմիրգյուղի, Գանձակի և Ծովագյուղի համայնքների) համապատասխանեցում

սանիտարական նորմերին (ցանկապատում, հողածածկում), որի արժեքը կարող է հասնել 42.0-45.0 մլն դրամ:

- Հետագայում աղբվայրերի վերակառուցումից հետո (որպես աղբավերաբեռնման կայաններ) այդ 5 պահպանման ենթակա աղբավայրերը անհրաժեշտ է լիկվիդացվել՝ հաշվի առնելով դրանց լոկալ նշանակությունը:

Առաջին փուլի համար աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 0.7-0.9 մլրդ դրամ:

Երկրորդ փուլով նախատեսվում է սկսել ընտրված 5 բարենպաստ տեղամասերում աղբի վերաբեռնման համար նախատեսված աղբավայրերի վերակառուցումը:

Ըստ քաղաքաշինական նորմերի (Справочник по проектированию «Районная планировка», Москва, 1986г.) 1հա-ի քաղաքաշինական յուրացման բազային արժեքը կազմում է 300.0 հազ.ռուբլի (ՌՖ) կամ 300.0 հազար ԱՄՆ դոլլար:

Բարենպաստ տարածքներում աղբավայրերի վերակառուցման արժեքը կթանկանա 10%-ով, սահմանփակ բարենպաստ տարածքներում 10-35%-ով, անբարենպաստ տարածքներում 35%-ից ավելի:

- Հաշվարկված է նաև աղբավայրի վերակառուցման արժեքը ՀՀ-ում գործող նախահաշվային նորմերով, ըստ որի 1հա աղբավերաբեռնման կայանի վերակառուցման արժեքը կկազմի 98760.0 հազ.դրամ կամ 270 հազ. ԱՄՆ դոլլար):

Այսպիսով 5 աղբավերաբեռնման կայանների (15.0-18.5հա) վերակառուցման արժեքը կկազմի 1.5-1.8 մլրդ դրամ, որին կավելանա աղբավայրերին մոտեցող ճանապարհների վերակառուցման արժեքը 1.16-1.60 մլրդ դրամ 15-20կմ-ի համար և տարածքների յուրացման արժեքի 10%-ի թանկացումը, որը տրված է ստորև բերված աղյուսակում (Աղբավայրերի կառուցման նախահաշվային արժեքները տրված են հավելվածում):

- Երկրորդ փուլում անհրաժեշտ է աստիճանաբար լիկվիդացնել սանիտարական նորմերին չհամապատասխանող աղբավայրերը: Աղբավայրերի լիկվիդացման և աղբի վնասագերծման աշխատանքների ընդհանուր արժեքը կկազմի 0.03-0.04մլրդ դրամ: Երկրորդ փուլում կատարվող աշխատանքների ընդհանուր արժեքը կկազմի 2.90-3.60 մլրդ դրամ:

- Երկրորդ փուլում վերակառուցված աղբի վերաբեռնման կայաններից կուտակված աղբի մշակման համար նախատեսվում է աղբամշակման գործարանի կառուցում Գագարին համայնքի հարևանությամբ (Գեղամավանի գյուղական համայնքի տարածքում): Աղբամշակման գործարանի 1 մոդուլի արժեքը 15000տ/տարի աղբի մշակմամբ կարժենա 3 մլն ԱՄՆ դոլլար, ետ գնումը 1.0-1.5 տարի:

- Գործարանի կառուցումը առաջնահերթ նախատեսվում է 1 մոդուլով (15000տ/տարի աղբի մշակմամբ): Գործարանի 1 մոդուլի գործարկումից հետո հնարավոր կլինի ճշգրտել աղբակուտակման իրական ծավալները՝ հաշվի առնելով գյուղական բնակչության

աղբակուտակման նորմի փոփոխությունները: Աղբի ծավալի մեծացման դեպքում հնարավոր է ավելացնել մոդուլների քանակը՝ մինչև կուտակված աղբի լրիվ մշակումը:

▪ Երկրորդ փուլում նախատեսվում է նաև պակետավորող մամլիչների տեղադրում քաղաքների, ռեկրեացիոն օբյեկտների, շուկաների, ինչպես նաև աղբավայրերի մոտ: Մամլիչները 1մ³ աղբը, որը կշռում է 25-30 կգ, կվերածեն մամլված թափոնների, որոնց 1մ³-ը կկշռի 300-500 կգ:

Պակետավորող մամլիչների օգտագործումը 20 անգամ փոքրացնում է աղբի կուտակման ժամանակավոր մատրեսները: 220 վոլտանոց մամլիչը (Малыш) զբաղեցնում է 1.5-3.0 քմ տարածք, քաշը՝ 450կգ, արժեքը՝ 107900 ռուբ(ԲԻՖ)=1618.0 հազար դրամ: 6-10 մամլիչի տեղադրման արժեքը կկազմի 0.01-0.02 մլրդ դրամ:

Երկրորդ փուլում իրականացվող աշխատանքների ընդհանուր գումարը կկազմի 4.0-4.8 մլրդ դրամ:

Այսպիսով, երկու փուլում իրականացվող աշխատանքների ընդհանուր գումարը կկազմի 4.7-5.7 մլրդ դրամ (տրված է աղյուսակ N 4-ում):

Աղյուսակ N 4

Առաջնահերթ միջոցառումների փուլերը	Միջոցառումները	Արժեքները (խոշորացված) մլրդ դրամ	Ժամանակացույց
I փուլ	Կոնտեյնրների տեղադրում	0.15-0.16	2011-2012
	Աղբատար մեքենաների (15-20 հատ) ձեռք բերում	0.5-0.7	
	Պահպանվող աղբավայրերի համապատասխանեցում սանիտարական նորմերին	0.045-0.05	
	Ընդամենը I փուլ	0.7-0.9	
II փուլ	Աղբավերաբեռնման կայանների համար նախատեսված աղբավայրերի վերակառուցում	1.5-1.8	2011-2015
	տարածքների յուրացման աշխատանքների արժեքի թանկացում 10%-ով	0.15-0.18	
	Սանիտարական նորմերին չհամապատասխանող աղբավայրերի լիկվիդացում, աղբի վնասագերծում	0.03-0.04	
	Ճանապարհների վերակառուցում (15-20կմ)	1.16-1.6	
	Աղբամշակման գործարանի կառուցում	1.1	
	Պակետավորող մամլիչների տեղադրում	0.01-0.02	
	Ընդամենը II փուլ	4.0-4.8	
Ընդամենը		4.7-5.7	

Աղբահեռացման աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ կլինի աղբահանության ծրագրի մշակում: Ծրագրի մշակման շրջանակներում անհրաժեշտ է նաև աղբի իրական ծավալների, գյուղական բնակավայրերում աղբակուտակման նորմերի մշակում:

Հեռանկարային բնակչության կանխատեսումային հաշվարկներ ՀՀ Ազգային վիճակագրության ծառայությունում 2002թ. հետո չեն իրականացվել: Սույն աշխատանքի շրջանակներում բերվում է միայն «Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման նախագծով» տրված հեռանկարային բնակչությունը՝ (375.5 հազար մարդ) հաշվարկված դեմոգրաֆիական տարողունակության մեթոդով: Դեմոգրաֆիական տարողունակությունը բնակչության այն առավելագույն թվաքանակն է, որ կարող է բնակվել տվյալ տարածքում չխախտելով էկոլոգիական հավասարակշռությունը: Նույն նախագծով հաշվարկված է նաև ունեկրեացիոն գոտու ֆունկցիոնալ տարողունակությունը (120.0 հազար տեղ):

Այսպիսով հեռանկարային բնակչությունը կազմում է 375.5 հազար մարդ, ժամանակավոր բնակչությունը՝ 120.0 հազար, ընդամենը՝ 495.0 հազար մարդ:

Գեղարքունիքի մարզի հեռանկարային բնակչություն (հաշվարկված դեմոգրաֆիական տարողունակության մեթոդով) աղբակուտակման հաշվարկային քանակը կլինի հետևյալը.

- Սևանի ավազանի հեռանկարային բնակչությունը կազմում է 375.5 հազար, իսկ ունեկրեացիոն գոտու ֆունկցիոնալ տարողունակությունը կազմում է 120.0 հազար տեղ (ըստ «Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման» նախագծի հիմնադրույթների):

- Այսպիսով մշտական բնակչության և ժամանակավոր բնակչության հեռանկարային թիվը կկազմի 495.0 հազար մարդ, իսկ աղբակուտակման հեռանկարային քանակը կկազմի $643.0 \text{ հազմ}^3 / \text{տարի} = 180 \text{ հազ.տ} / \text{տարի}$:

- Դեմոգրաֆիական տարողունակության հաշվարկով բնակչության տեղաբաշխումը շատ հեռու հեռանկար է, այն կախված է ամբողջ հանրապետության, մարզի սոցիալ-տնտեսական, աշխարհաքաղաքական իրավիճակից և այլն, այդ պատճառով սույն աշխատանքի շրջանակներում հեռանկարային աղբահանման խնդիրները դիտարկել անհնար է:

